

կուսին ըճ (= 800) քսակ փողս հարկադիրս լինելով ի վերայ նոցա թէ գնացէք եւ ի յանդանօր դպրատունս բացէք եւ սահմանեցէք որ ես աստի յորդորեալ մարդիկ առաքիցեմ աստի առ ձեզ վասն ուսնելոյ զլատինականս», եւ թէ զբոլոր զազգն իմ եւ զժողովուրդս հնազանդեցուցեալ փափին Հռոմայ եւ հետեւիլ նմա: Ուստի բոլոր ժողովուրդք հայոց ընթանան ի յեկեղեցիս լատինացւոց» (էջ 238): Պատրիարք ընտրուելու ժամանակ խոստացան իրեն որ անմիջապէս եպիսկոպոս պիտի ձեռնադրուի, սակայն երբ 1767ին ուղեց Էջմիածին երթալ, եւ Սիմէոն Աթոռիկոս իւր թղթովն խոստացաւ մինչեւ Աարին եւ նոյն իսկ Ա. Պոլիս գալ ձեռնադրելու, Գասպար ամիրայն հակառակեցաւ. Սիմէոն Աթոռս ալ թոյլ չտուաւ որ Պոլիս եպիսկոպոսներէն ձեռնադրուի (Համեմատե՛ Աղանեանց, անդ՝ էջ ճՁԹ, ճՂ եւն):

«Յիշատակարանի» մէջ կը յիշատակէնաեւ հետեւեալները: 1765ին Տրապիզոնի առաջնորդ էր Երզնկացի Գրիգոր կոչեցեալ Աթանաս Եպիսկոպոսն, որ էր «այր սակաւահասակ եւ ամբարիշտ», որմէ շատ կրեց Գրիգոր (էջ 151): 1765ին «լիրք եւ անհարկի դուրսը կոչեցեալ Սանտալճի Սարգիս...» արտորուեցաւ Այնթափ: 1768ին Տրապիզոնի կոչեցեալ Սարգիս երէցն Սամաթիոյ եկեղեցւոյն քահանայն «ըստահակեալ... քրթմնջէր» (153): 1769 Գեկա.ին «Ղուրու պալըխ օղու Երամ սուտ քրիստոնեայն» մատնած եւ զրպարտած է զԳրիգոր (153):